



ԱՆՁՐԵՒ

Միրուն անճրեւ , սիրուն անճրեւ ,
 Հով հով օրեր քո հետը բեր .
 Կանաչացո՛ւր ծառի տերեւ ,
 Զարդարիր մեր խոպան դաշտեր :

Ամառնային կիզիչ արեւ
 Այրեց մեր դաշտ ու պարտւոցներ .
 Նրա սուր սուր ճառագայթներ
 Զորցուց ամեն դալար տունկեր :

Խեղճ գիւղացին ձեռքը երկինք
 Բարձրացրած աղաչում է ,
 Եւ գոհելով մատղաշ գառինք
 Քո գալուղ սպասում է :

Թեպետ ամեն մի խոր ձորից
 Մի սառն աղբիւր բղխում է ,
 Բայց գիւղացին գոն չէ դրանից ,
 Նրա արտը չորանում է :

Սիրուն անճրեւ , սիրուն անճրեւ ,
Առատութիւնք քո հետք բեր .
Կանաչացուք ծառի տերեւ ,
Զարդարիր մեր խոպան դաշտեր :

Տվիսիս

ՍՐԻՆՅ

Ն Ա Խ Ա Ն Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հայր Պօրըկար՝ Հռովմայու Կեղեցիներէն մէկուն մէջ նախախնամութեան վերայ գեղեցիկ քարոզ մը տալէն ետքը , որնոր միւս քարոզներուն պէս ունկնդրաց մեծ բազմութիւն հաւաքած էր , սենեակը քաջուած չապիկը փոխելու վրայ էր երբ իմաց տուն իրեն թէ անձանթ մը գլինքը տեսնել կ'ուզէ : Զգեստը փոխելէն յետոյ խակոյն նոր եկողին ներկայացաւ , որու կերպարանքէն և արտաքին երեւոյթէն կարծես թէ գործաւոր մը եղած ըլլայ : « Ի՞նչ կուզէք , » պարոն ըսաւ քարոզիչը :

— Քիչ մը հետդ խօսակցիլ , պատասխանեց անձանթը սաստիկ սրտայուզեալ ձայնով մը և կերպարանքին վրայ արտաքոյ կարգի նշաններ ունենալով , որոնք արժանապատիւ քահանային հետաքրքրութիւնը շարժեցին :

— Հաճութեամբ սրտի , պատասխանեց քահանայն , նստեցէք ձեզ մտիկ ընելու պատրաստ եմ : Մէջերնին հետեւեալ խօսակցութիւնները տեղի ունեցաւ :

— Տէ՛ր հայր , այսօր Ձեր քարոզը մտիկ ըրի :

— Լա՛ւ , ուրախ եմ և ձեզ համար ալ , վասն զի այնպիսի բաներ խօսեցայ , որ կը յուսամ ո՛չ ոք կրնայ մոռնալ :

— Ո՛չ , տէ՛ր , աներկբայ եմ որ շատ աղէկ խօսեցաք , բայց նախախնամութեան բարեբարութիւնները գովեցիր , ես ասոր չեմ հաւատար :

— Ի՞նչպէս , ինչ սոսկալի բան խօսեցաք :

— Ո՛չ , տէ՛ր , նախախնամութիւն չիկայ ինձի համար : Գատեցէք անգամ մի : Ես վարպետ հիւան մ'եմ : Կողակից մը և երեք դաւակ ունիմ : Համեստ մարդիկ եմք ու կաշխատիմք և մէկու մը գէշութիւն ըրած չեմք : Թաղիս մէջ բնակողներուն հարցնր իմ վրայօք և ամենքն ալ պիտի վկայեն թէ հացս ճակտիս քրտինքովը կը վաստկիմ : Գինեմուլութիւն չունիմ , նարտ չեմ խաղար , կնկանս հետ աղէկ կը վարուիմ , և եթէ պարտք ընելու լինիմ , հաւատարմութեամբ կը հատուցանեմ :

— Ասոնց ամենը դիւրաւ կը հաւատամ , տղաս , ընդմիջեց արժանապատիւ եկեղեցականը , որուն սիրտը այս խօսքերէն սաստիկ շարժած էր , բայց ինչ ըսել կ'ուզես , և ինքզինք գովելու պատմութիւնները ինչ յարարերութիւն ունին նախախնամութեան չի հաւատալուդ :

— Ի՞նչ ըսել կ'ուզեմ Տէ՛ր իմ , և ինչ յարաբերութիւններ կա՞ն : Ադ հարցումովդ զիս կը յուսահատեցնես այնպէս որ ինքզինքս գետը նետելու եմ :

— Աստուած իմ , պոռաց հայր Պօրըկար , այսպիսի առաջարկութենէ մը զարհուրելով , Աստուած պահէ զքեզ այդպիսի մտաց ցնորմունքէ , որով ո՞չ միայն մարմինդ այլ և հոգիդ պիտի կորսնցնես : Ա՛հ , ի՞նչ բան այսպիսի դատապարտիլ առաջադրութիւն մը ընել տուեր է քեզ :

— Տէ՛ր , պարտապանիս մէկուն սնանկանալովը կործանիչ վնաս մը կրեցի : Ամսոյս վերջը հատուցանելու պարտամուրհակներ ստորագրած եմ զորոնք չպիտի կրնամ վճարել : Այս առաջին անգամն է՝ որ ստորագրութեանս պատիւը պիտի կորսնցնեմ : Այս ձախորդութեան երեւակայութիւնը սնտանելի է ինձ , թէպէտ և շատերէն օգնութիւն խնդրեցի , բայց ունայն՝ վասն զի ազգականներս և

բարեկամներս ինձմէ հարուստ չեն, Հիմա անմիջապէս ինքզինքս գետը նետելու կ'երթամ :

— Բայց բարեկամ, կ'նիկդ զոր կը սիրէ, զաւելներդ որ առանց քեզի չեն կըրնար ապրիլ, ի՞նչ պիտի լինին եթէ երեսի վրայ ձգելու ըլլաս :

Ս.յս հարցման վրայ խեղճ գործաւորին արտասուքները սկսան վազել և պատասխանեց :

— Ի՛նչ ընեմ, անպատիւ չեմ ուզեր ապրիլ, անոնց նախատինք բերած չըլլամ, բայց երբ որ ես մեռնիմ՝ գուցէ խղճան անոնց վրայ :

— Ըսէ՛, կ'աղաչեմ, այսպիսի սոսկալի մտածումներով, ինչպէ՛ս եկար իմ քարոզս մտիկ ընելու :

— Ա՛հ, տէր իմ, յատուկ դիտմամբ չեկայ. այլ պատահմամբ հոն գտնուեցայ : Եկեղեցիին քովերէն անցնելով տեսայ որ ժողովրդեան բազմութիւնը շտապաւ ներս կը մտնէր, գուցէ առանց իմանալու, միւսներուն պէս ես ալ մտայ, ի՛նչ ըլլալը հարցուցի. պատասխանեցին ինձի թէ՛ երեւելի քարոզիչ մը ատենաբանութիւն պիտի ընէ : Ուստի կեցայ և քարոզին մինչեւ վերջն մտիկ ըրի : Բոլոր խօսածներդ շատ աղէկ էին. բայց Տէր իմ, վիճակս ամեղուժեանս հետ բազդատելով, չի կրցի ինքզինքս համոզել թէ նախախնամութիւն կայ :

— Ի՛նչ կըսես բարեկամս, այսպիսի յուսահատական նպատակով մը Եկեղեցի մը տեր, հոն դիւ լսեր, քովս եկար և նեղութիւններդ ինձ յայտնեցիր, չե՞ս մի գիտեր որ բոլորն ալ նախախնամութիւն է :

Ս.յս դիտուութիւնը գործաւորին միտքը զարնելով թիչ մը լուութենէ յետոյ պատասխանեց :

— Ուղիղ է, տէր իմ, ահա՛ գիտեալու

րան մը, բայց ասիկայ ամսոյս երեսունին մուրհակներս չի վճարէր :

Բոլոր այս խօսակցութեան մէջ եղածներէն հայր Պօրըկարին սիրաւ շարժեր էին, ու դիմացը կեցողին համեստ, բայց տղէտ մարդ մը և անմիջապէս օգնութեան կարօտ լինելը ցցուցած էին :

Անօգուտ դատեց քահանայն այս մարդուն վրայ հետազօտութիւններ ընելը, որուն խօսքերն և շարժումները ճշմարտութիւնը կը հաստատէին :

— Մտիկ ըրէ՛ տղաս, կարծեմ թէ պարկեշտ մարդ մ'ես, դժբաղդ ըլլալուդ պատճառը դու չես, և դիւ խաբելու մտօք քովս չես եկած : Նեղութենէդ ազատելու համար քեզ օգնել կ'ուզեմ : Որչափ բան պէտք է մուրհակներդ հատուցանելու, թէպէտ հարուստ չեմ, բայց կրնամ պէտք եղած դումարը նուիրելու :

— Ո՛հ տէ՛ր իմ, ինչ բարեբարութիւն, հարիւր ոսկիէն պակասով կազատիմ :

— Բարեկամս, ահա հարիւր ոսկի, իմ ձեռքովս տալու երջանկութիւնը պիտի չունենայի, եթէ քանի մը որ առաջ Ն. . . կոմսուհին՝ ողորմութեան վրայ ըրած ատենաբանութիւնս լսելէն յետոյ այս ըստակը չի խրկէր ինձի, կարօտելոց օգնելու նպատակաւ : Ս.յս գումարը շատ ընտանեաց խեղճութիւնը թեթեւցնելու պիտի ծառայէր մէջերնին բաժնելով, բայց տղաս, նախախնամութիւնը այս նուէրը քեզ կ'ընէ այս վտանգաւոր վիճակիդ մէջ. ուրեմն, սա քու հարիւր ոսկին և մուրհակներդ վճարէ ամսոյս երեսունին, և հաւատացիր նախախնամութեան :

Խղճալի գործաւորը այս խօսքերուն վերայ հայր Պօրըկարին ոտքը ինկաւ և արցունքովը թրջեց զանոնք, առանց կարողանալու բան մը արտասանել, սրտին մէջ զարմանքն, ու երախտազիտութիւնը

սաստիկ շարժած լինելով աչուըները դէպ ի երկինք վերուց, սրտին խորէն օրհնեց զԱստուած և ստակը բարի քահանային ձեռքէն. առնելով և այլ ջերմեռանդութեամբ համբուրելով հեռացաւ :

Ու թ տարի յետոյ այս գործաւորը հայր Պօրըկարի ներկայացաւ, և ստացած հարիւր ոսկին վճարելէն ետքը յիսուն ոսկի ալ կարօտելոց բաշխուելու համար նուէր յանձնեց քահանային, և խոստովանեցաւ որ Աստուծոյ հաւատալէն ի վեր իւր գործերը լաւ վիճակի մէջ մտած էին :

ՕՏԱՐԱՅ ԶԸ ՎԱՍՏԱՀԻԼ

Հարուստ վաճառական մ'որ մը իւր տասնութամեայ դստեր մեծագումար ըստակ յանձնած էր քաղաքապետին նուէր տանելու համար : Թէեւ օրիորդի մը չէր վայելէր այսպիսի գործ մ'ընել, բայց ի պատիւ սիրեցնալ քաղաքապետին, օրիորդըն՝ ինք՝ ստանձնած էր սոյն գործ ի գըլուխ հանելու : Երթալու տեղը կէս ժամուան մը չափ հեռաւորութիւն ունէր ու երկու ճամբայ ունէր . մին՝ ապահով ու մաքուր էր, իսկ միւսը վտանգաւոր, ամայի և աւազակներու որջն :

Օրիորդը բնաւ չէր գիտեր թէ՛ ո՞րն է ապահով և ուղիղ ճամբան, ուստի սկսաւ սովորական քալուածքով իւր ուղին շարունակել . տաս վայրկեանի չափ քալած էր, երբ ծերունի մը, լաւ հագուած, դիմացըն ելաւ ու անոր հարցուց թէ՛ ո՞ւր կերթայ միայնակ այն ուղիէն : — Այդ ուղին, սիրելի աղջիկս, ըսաւ կեղծ ձայնիւ մը, (դիտնալ պէտք է որ ծերունին ընդհակառակն երեսնամեայ կորովի երիտասարդ մ'էր, ծագեալ աւազակներու խմբի մ'ընկեր) շատ վտանգաւոր է, ինչու

որ աւազակներ կան, որոնք մարդս կը կողոպտեն գլխէն մինչեւ ոտքերը : Ուստի եթէ կ'ուզէք որ ապահով ու անվտանգ փափաքած տեղերնիդ հասնիլ, այս, ճամբայէն երբոր երթաք, լաւադոյն ըրած պիտի ըլլաք : Ուրեմն դարձիք : » Եւ ցոյց տուաւ այն ուղին ուր օրիորդին առջի գացածէն ամենադժնդակ ու երկիւղալին էր :

Աղնիւ օրիորդը, ծերունւոյն միամըտութենէն խաբուելով՝ անոր պատմեց իւր ուղեւորութեան պատճառն, և սկսաւ չարասիրտ ծերունւոյն ցոյց տուած վտանգալից ճամբէն քալել : Ասոր վրայ ծերունին եւս անոր ըսաւ թէ՛ ինքն ալ նոյն նպատակաւ իւր տիրոջ կողմանէ ընծայ մը կը տանէր վեճմափայլ քաղաքապետին :

Այսպէս սկսան միասին այլ եւ այլ նիւթերու վրայ խօսակցելով յառաջանալ : Երբ տասը վայրկեան եւս քալեցին, ծերունին կանգ առաւ խորունկ ջրհորի մը առջեւ և մօտը գտնուած ժայռի մը վրայ նստաւ, որպէս զի հանդչի : Բայց հազիւ վայրկեան մ'անցած էր, իւր կեղծ կերպարանը փոխելով՝ աւազակապետի մը ձեւն ստացաւ և իւր խօսքն աղջկան ուղղելով հրամայական կերպով՝ ըսաւ .

« Կամ քովի ունեցած ստակդ պիտի յանձնես ինձ այս պահուս, և կամ զքեզ ջրհորը կ'նետես : »


Վաճառականին դուստրը այս սպառնալից խօսքերն լսելով՝ զարհուրեցաւ և պատրաստուած էր իւր ունեցածն, այսինքն հօրը նուէրը յանձնել աւազակապետին, երբ նա՝ անզգամը՝ միւս կողմը դարձաւ, ձայն մը լսած լինելուն համար և ուզեց հասնիլ թէ՛ ո՞վ էր այն ձայնը հանողն :

Երբ չարագործը սոյն դիրքին մէջ կ'զլտնուէր, կարծես թէ օրիորդին վրայ արիւնութիւն մ'եկած էր, որ իսկոյն, մեծ զօ-

րութեամբ մը, յարձակելով անոր վրայ, յաջողեցաւ ջրհորը նետել կեղծ ծերունին: Եւ շփոթ ու զարհուրած բաղաք վազեց, աղաչելով իւր դէմն ելնող անցորդացորը այս ինչ ջրհորին մէջի մարդն ազատեն: Այս լուրին վրայ բազմութիւն մ'է որ կ'գայ ջրհորին առաջ և քառորդ մը տաժանելի աշխատութենէ վերջ, յաջողեցան աւազակապետն դուրս հանել, որով հասկցուեցաւ թէ՛ վայրկեանի մը մէջ արիացած օրիորդն ոճրագործ մը ջրհորը նետած էր և արժանի պատիժ մը տուած էր յանդէտս զայն խեղդելով:

Ուստի, սիրելի ընթերցողք, գոյջ կեցիք անձամօրաց ու օտարաց վստահելի:

Ջ. Գ. ՊԱՐՏԻՁՊԱՆԵԱՆ



ԿԵՆԴԱՆԻ ՕԴԱՉԱՓՆԵՐ

Ընտանի կամ վայրենի անասունք մեծագոյն մասամբ բնազդմամբ կցգան օդոյ մօտալուտ փոփոխութիւններն: Փոթորկին մերձեցման պահուն, թռչունք ընդհանրապէս կը դադրին գեղգեղելէ: Երբ սագերն բադերն յուզեալ կերպարանօք խորասուզին ջուրց մէջ, հաւերն աւազին մէջ գլորին, երբ գորտերն սովորականէն աւելի զօրաւոր ձայնիւ մը ըսկըսին կարկաչել, և պապկայներն չափէն աւելի շաղկերատեն, և երբ սիրամարգն անախորժ ձայներ արձակէ, նշան է թէ՛ անձրեւն մօտալուտ է:

Էջերն ջորիներն, ձիերն եւս նմանօրինակ պարագայից մէջ կը յայտնեն տեսակ մը անհանդստութիւն. կատուն մանաւանդ աւելի կը յամուանայ և միշտ իւր թաթը ահանջին ետեւ կը տանի:

Միծեռնակն, գեղեցիկ օդին, կը թռչըտի մթնոլորտին միջին վերնագաւառացիէլ — ուր կորսայ ձանձի մեծ քանակու-

թիւն մը: Փոթորկին մերձեցման պահուն խիստ բարձրերն կ'ելնէ, իրր թէ կուզէ անկից վախչիլ: Երբ անձրեւ պիտի գայ և կամ օդն կսկսի խոնաւնալ, կը թռչտինա ընդհակառակն խիստ ցածէն, որսալու համար տանց վրայ, պատերուն մէջ, գետնին մակերեսը ապաստանող համայն միջատներն:

Ձկնորսք կ'զգան փոթորկին մերձեցումը՝ երբ ձկունք ջրէն դուրս ուտոստումներ ընեն և սովորակէն դիւրագոյնս խածնեն կերը:

Պարտիզաց ոստայնագործ սարդն անձրեւոյ մերձեցման միջոցին, կը կարճցնէ և կ'անփոփէ իր հրաշակերտին թելերն: Եթէ, ընդհակառակն ոստայնին թելերն երկարածիգ տեսնէք, վստահ եղէք թէ՛ գեղեցիկ օդը ընդ երկար պիտի վայելէք: Յորչափ անձրեւոյ երկիւղ լինի, սարդն չը շինէր ո և է նոր ոստայն մը:

Մարգաց փոքր կանաչ գորտն իրր կենդանի օդաչափ մը կրնայ ծառայել մեզ: Առէ՛ք սրուակ մը որոյ մէջ դրէք աւազ և խոտ ու հաստատեցէք նաեւ մի փոքր սանդուղ: Գեղեցիկ օդ եղած ժամանակ, անասունը սանդուղին վերի ծայրը պիտի ելնէ:

Ուրիշ լաւագոյն միջոց մը. առէ՛ք տըզրուկ մը. դրէք զայն սրուակի մը մէջ որոյ երեք քառորդը լի ըլլայ մաքուր և պայծառ ջրով և բերանը խցով մը գոցուած: Երբ օդն գեղեցիկ լինի, տղրուկը անշարժ կը մնայ սրուակին յատակը օձածեւ: Եթէ պիտի անձրեւէ, ջրոյ մակերեսը կ'ելնէ, և հոն կը մնայ ցորչափ անձրեւն տեւէ: Սաստկաչունչ հողմոց ժամանակ, անդադար կերերայ: Սաստիկ և վտանգաւոր փոթորկի պահուն, ջրէն դուրս կ'ելնէ և ջզածգական շարժումներ կ'ընէ իրր յայտարար իւր ներքին յուզման:

Թարգմ. Մ. Գ. ՄՕՁԵԱՆ

ՀՍՅՐԱԿԱՆ ԳՈՐՈՎ

1799 ին երբ տեղի ունեցաւ Գաղղիոյ յեղափոխութիւնն . ինչպէս կը յայտնէ մեզ պատմութիւնն , ամեն տեսակ անիրաւութիւններ , անկարգութիւններ և չարագործութիւններ անպակաս էին , գրեթէ ամէն ժամանակ երկրին մէջ իրարանցումն , վէճ ու պայքար անդադար կը շարունակուէր . այնպէս որ ժողովրդէան մէկ մասը միապետութիւն ուրիշ մաս մը հասարակապետութիւն կ'ուզէր :

Տրանսայի ազդային ժողովն չէր կարող այս անկարգութեանց վերջ տալ , ամեն օր զինուորներ բազմաթիւ յանցապարտներ կը բերէին բանտը : Յանցաւորներու թիւն օր քան զօր այնքան կը բազմապատուէր և քաղաքի բանտերն այնքան անցուկ կը գային որ ալ ազգային ժողովն որոշեց բանտարկեալներէն մաս մը Պասթիլի մէջ պահուիլ : Պասթիլի յանցապարտներուն մէջ կը գտնուէր ծեր ազնուականի մը անմեղ միածին ու սիրասուն որդին Շարլ անունով : Ո՛հ , ի՛նչ տաժանելի վիճակ , տակաւին քսան գարուններ հաղիւ սահած գնացած էին սոյն պատանեկին քաղցր կեանքին ստուերներէն , տակաւին մանկութիւնն ոսկեփետուր թռիչներով նոր խոյս կը տար , տակաւին հայրենեաց սիրոյ քնքուշ զգացումներ հազիւ բոլորած էին զինք , և միթէ ցաւալի չ'է տեսնել այգալիսի երիտասարդ մը բանտի դուրս քարերու վրայ : Երանելի կերպարանք մը , վե՛ս ու լայնատարած ճակատ մ'որու վըրայէն կարծես խնայութեան նշոյլներ կը փալիլէին ծիածանի մը նման , նոճեհասակ մ'որու վրայէն կարծես այն ազնիւ զգացումներ և ընտիր ընտիր զգացումներ , բարեմասնութիւններ անկարելի էին նշմարել ուրիշի մը վրայ : Եւ ի՛նչպէս կըր-

նայ դիմանալ ծերուկ հայր մը այս ցաւին քանի որ ողջ առողջ իւր որդին կը նուիրէ գերեզմանին , շատ աներեւակայելի բան մը կը թուէր իրեն այսպիսի ծերուկ հասակի մը մէջ տեսնել միածին որդւոյ մը դառնակսկիծ մահը , աշխարհս իրեն դժոխք մը կը թուէր , ամեն տիւ և գիշեր անոր վրայ կը մտածէր , և չէր կարող դադրեցնել այն արտասուներն զոր կը հոսէին կլոր կլոր իւր ցաւօք ծանրացեալ աչերէն : Մտածեց օր մը կամայ եւ ակամայ երկրորդ անգամ մ'եւս իւր որդին տաքուկ ծոցին ներքեւ սեղմելու համար բանտարկուիլ : Ո՛հ , սզագգեաց և քստմնելի օրեր : Առաւօտ մը կանուխ դռնէն դուրս ելաւ , և գնաց պտտիլ այն վայրը ուր իւր սրդին բանտարկուած էր , երբ այսպէս խորունկ մտածութեանց մէջ ընկղմեալ կը քայլէր , ահա հեռուէն ոտքի արագ տրոփիւններ լսեց տեսաւ զինուորներու խումբ մ'որ շատ մը յանցաւորներ կը բերէին , կարծես թէ նոր կեանք ըստացաւ : Երբ Պասթիլի դուռն բացուեցաւ և յանցապարտներն սկսան ներս մտնել , մեր ծերուկն եւս գաղտագողի ներս մտաւ , և ոչ մին զինքը նշմարեց , իւր առաջին դործն եղաւ որդին փնտուել և առանց յողնութեան գտաւ զինք , կարծեց թէ արքայութեան մէջ է , երկար ժամանակ իւր հայրական գորովագութ կարօտըն առնելէն ետեւ անոր քով նստաւ : Շարլ իւր հայրը տեսնելուն շատ շուարած էր , բայց հայրն անվրդով դարձաւ և ըսաւ անոր , « Որդեակ , ահա եկայ վերջին անգամ մ'եւս տեսնել քեզ , որդիական անհատնում սէրն զիս բռնադատեց իմ տկար ոտներս շարժիլ և մօտենալով առ քեզ առնել իմ սէրս , և մեռնիլ այսպէս որդիական սէրէն : »

Բանտարկեալներն օր ըստ օրէ կը շատնային այնպէս որ Պասթիլն եւս սնրաւական եկաւ , բոլոր յանցապարտներն իւր

մէջ բովանդակելու , այս պատճառաւ ազգային ժողովը հրամայեց որպէս զի անոնցմէ մի քանիներ զլսատուին : Առաւօտ մը ժամն հինգն էր երբ բարձրադիր դռնակն Պասթիլի կ'որոտար , շատեր դռնակն բանալու փութացին և ահա դահձապետն իւր դահիճներով ներս մտաւ ցուցակ մը ձեռքն բռնած , կ'առաջնորդուի դէպի 16^{րդ} խորշին մէջ ուր մեր պատմութեան հայրը և զաւակը կը գըտնուէին , դահձապետն սկսաւ մէկիկ մէկիկ կարգաւ զլսատուելու դատապարտուող անձանց անուններն , վերջին տնունն Շարլինն էր , բայց նա խորունկ քունի մէջ ընկղմած կը խորդար . կըրկնակի անգամներ իւր անունն գոչեցին , բայց ո՛ր , մեր Շարլի մտազբաղ ու խորունկ խորհուրդներ զինք չ'էին թոյլադրէր որ արթննայ , ծերունին ապշած չը գիտէր ինչ ընելն , սակայն քաջ գիտէր թէ եթէ իւր մանուկն արթնցնէ , ահամայ մահուան հրաւիրած պիտի լինի զայն , ուստի գրպանէն թուղթ մը հանեց և քանի մը տող բան գրելով անոր մօտ թողուց , ապա ուժգին ձայնով էս եմ ըստայնպէս որ բազմադարեան խորշին հաստատաչէն ձեզունն արձագանք տուաւ և զատապարտեալներուն հետ խառնուելով զուրս ելաւ : Երբ զլսատուելու կարգն խեղճ ծերունիին եկաւ գոչեց հառաչելով սրտագին . « Սէ՛ր , սէ՛ր , սէ՛ր սէ՛ր զիս մինչեւ այս բեմը հանեցիր : » Բաւական ժամանակէն յետոյ Շարլ իւր խորունկ քնէն արթնցաւ . սակայն և ոչ մին գտաւ իւր մօտ , սկսաւ մտածել , բարեբաղդարար հօրը իւր մօտ թողած թուղթն տեսնելով առաւ և հետեւեալն կարդաց . « Որդեակ , եթէ երբէք բանտէն ազատելու լինիս յիշէ անգամ մը քու ալեւոր հայրդ որ քեզ երկրորդ անգամ կեանք տուաւ : » Ի պատասխան այս խօսքին Շարլ գոչեց սըր-

տարուխ , « Ո՛հ , ի՛նչ աստիճան որդեսիրութիւն » Շատ ցաւեցաւ , շատ տրտմեցաւ իւր հօրը մահուան վրայ , սակայն ինչ օգուտ մտածեց թէ աշխարհս և ամէն ինչ ոչինչ են , որքան փառք ու պատիւ ունենայ մարդս և հարստութեամբ աշխարհիս ամեն վայելքներ վայելէ , բան մը չ'են արժէր քանի որ մարդուս կեանք սպառնալից է , քանի որ մարդս ծնած է , մեռնելու և իւր մեղքերն քաւելու : Նա իւր միակ հայրն կորոյս սակայն յեղափոխութեան ամէն արկածներ որ այնքան ծանրալիւռ մահերու պատճառ եղան և վերջացան , ինքն եւս արժանացաւ ազատութեան շնչին , մտադրեց վայելել հօրը հարստութիւնը ու փառք , սակայն իյիշատակ իւր հօր , աղօթել միշտ իւր անգին կենաց համար :

Մանուկք , սիրեցէք ձեր հայրեր և մի՛ լինիք ապերախտ ձեր հօր առատածեռն և անգին զթութեան վրայ : Երանի՛ այն մանկան որ կը ձանաչէ իւր հօր և մօր երախտիքն և կը ջանայ անոնց փոխարէն յատուցանել կրկնապատիկ աշխատութեամբ :

Թարգմ. ՅՈՎ. ՀԱՆՆԵՅՍ Խ. ՇԱՀՈՒՄԵԱՆ

ԲԱՐՈՅՍԱԿԱՆ ԱՌԱՄՆԵՐ

Գործի մը ձեռնարկած ժամանակից որ չափ առատ դրամ ունենաս , նոյնչափ նուազ հարստութեամբ պիտի գործէ քաշուիս :

Աշխատութեամբ չահուած դրամն աւելի փայլուն է քան այն զոր ծնողացդ գըրպաններուն մէջ պիտի գտնես :

Համետոտ նախաճաշը , երեկոյեան ճաշի ախորժակ կուտայ :



ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ

Ընդ առանձինքս ի՛նչ կայ սիրուն
Քան զանձկայի եղբայր անուն :


Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Եղբայր և քույր , ո՛՛հ , ի՛նչ քաղցրիկ անուններ ,
կարծես բերնէդ մեղքը կաթի սըրբանուէր .
Եղբայրութի՛ւն , կա՛յ բան մ'անողչ-բան ըզքեղ
Քան ըզքեղ սուրբ , հրեշտակային , սըրտա՛նէզ .
ՄԼտերմութեանց դու ես բնականն ամենէն ,
Ըզքեղ անսիրտ մարդիկ միայն կ'անգոսնեն -
Առանց քեզի աշխարհս անլոյս զընդան մ'եր ,
Փրկիչն Յիսուս բերաւ ըզքեղ յաշխարհ մեր .
Ազնււազոյն սիրտք քեզ անքոյթ բնակարան ,
Ո՛վ դու մաքուր սիրոյ անշէջ վառարան :

Սիրէ՛ , մանկի՛կ , զեղբարը քո փառելի ,
Սիրէ՛ զանձք ամէն բանէ աւելի .
Դուք լոյս տեսաք նոյն հայրենի յարկին տակ
Ամէնքդ ալ հէք , անզոր , վըշտաց անդիտակ ,
Ձեզ նոյն մայրիկն անուշահամ ջամբէց կաթ
Եւ նոյն ծընողք ձեզ կրթեցին խանդակաթ .
Ո՛՛հ , սիրեցէ՛ք զիրար , լըցէք ձեր սիրտեր
Եղբայրական սիրով զոր ձեզ շնորհեց Տէր .
Ձի այն եղբարք որք չունին սէր և համբոյր
Կը նրմանին այն ծաղկանց որք չունին բոյր ,

Եղբայր մի գանձ է երկնատուր և անգին ,
 Մեծագոյն յոյս թէ՛ մեծատան թէ՛ հիբին .
 Միշտ սիրեցէ՛ք զիրար , մանկուհի գեղունակ ,
 Այդ սերն անբիծ , ո՛հ , մի՛ երբէք մոռանաք .
 Առանց սիրոյ՝ մարդն անբան է անըզգայ ,
 Ուր չըկայ սէր՝ յաջողութիւն ալ չըկայ .
 Եղբայր էք դուք , յեշեցէ՛ք զայս յաւիտեան ,
 Սիրտ ուր այդ սէր եռայ՝ խընդից է կայան .
 Հըզօր է սէր , և զի Աստուած ալ սէր է
 Նա որ զԱստուած սիրէ՝ զեղբայրն ալ սիրէ :

Քաղկեդոն ԿԱՐԱՊԵՏ Ա. ՈՍԿԵԱՆ



նուեցաւ Ասիոյ գլխաւոր քաղաքաց ու
 թագաւորաց ծախքո՞ղն : Զայն երկրաշարժ-
 ներէ՛ զերծ պահելու համար , խոնաւ հո-
 ղի մը վրայ կանգնեցին , և որպէս զի ա-
 սանկ մէկ շէնքի հիմերն չը խրին կակուղ
 հողին մէջ , նախ մանրուած ածուխ , յե-
 սոյ բուրդ դոցեցին այն հողուն վրայ :
 Ամբողջ տաճարն 425 ոտք երկայնութիւն
 և 220 ոտք լայնութիւն ունի : Անոր մէջ
 կան 127 սիւներ , որք նոյնքան թագաւո-
 րաց պարգեւներն են . նոցա իւրաքան-



ՏԻԱՆԱՅԻ ՏԱՃԱՐԸ

Վէտրիւվ կ'ըսէ թէ Եփեսոսի այս տա-
 ճարն իւր ճակատն ունէր ութը սիւն և
 երկու կողերն ալ երկու կարգ զուգահե-
 ռական սիւներ : Պաւստնիաս անոր հա-
 մար կ'ըսէ թէ աշխարհի ամենէն հոյա-
 կապ շէնքն էր : Ամպեղիոս եռանդազին
 կը գովէ զայն , վերջապէս Պլինիոս բաւա-
 կան մանրամասն կը նկարագրէ :

« Այս տաճարը , կ'ըսէ , որու համար
 220 տարի պէտք եղաւ աշխատիլ , կանգ-

չիւրն 60 ոտք բարձրութիւն ունի : Այս
 սիւներու 36ը քանդակեալ են , և մին՝
 Սոկրատի ձեռամբ : Ճարտարապետն էր
 Քէրսիփրոն : Դրանը ճակտի քարն շատ
 դժուար եղաւ տեղաւորել : Ճարտարա-
 պետն յուսահատեցաւ և կը մտաբերէր
 ինքզինքն սպաննել , երբ Տիանայ երեւ-
 ցաւ իրեն յերանգի , խրատեց որ ապրի և
 խոստացաւ օգնել իրեն : Արդարեւ յա-
 ջորդ օրը քարն իւր տեղը դրուած էր : »

Պլինիոսի նկարագրած Եփեսոսի տա-
 ճարն 77Է տաճարն էր : Արդէն ուրիշ վեց

հատ շինուած ու կործանած էին : նոցա մին Երոստրատի վառած հրդեհին ճարակ եղած էր , Աղեքսանդրու ծնած օրը : Այն խեղճ Երոստրատին խենթ կ'ըսեն . և սակայն բաւական լաւ խորհրէ է : Կուզէր անունն անմահացնել . և ո՛չ ապաքէն յաջողեցաւ : Կրնանք ըսել որ այս անմահութիւնը , զոր ձեռք ձգեց տաճար մը այրելով , սուղի նստաւ : Աղեքսանդրու անմահութիւնն աւելի սուղի նստաւ Յու նաստանի և Ասիոյ համար :

Եփեսոսի տաճարն իբր օրինակ մը ցոյց կուտային : Ատաղձներն եղեւնաբայտէ էին և կըսուէի թէ նորա կատարն կելլուէր սանդուղէ մը , որ շինուած էր Կիպրոսէն եկած միակ որթատունկէ մը :

Դիցուհւոյն արձանն , որ շինուած էր փայտէ , և զոր վերջէն , երբ Եփեսոս հարըստացաւ , ոսկւով պատեցին , մին էր այն բազմաստուած կոչուած արձաններէն , որք քանի մ'աստուածոց ստորագելիներն միանգամայն կը ներկայացնէին : Գլխուն վրայ կար որմնային թագ մը . ձեռքերնին մարմնէն բաժնուած՝ կարծես խաղաղութիւն կը սփռէին :

Նւ սակայն այս տաճարին մէջ ուրիշ ինչ հրաշալիքներ կային : Նշանաւոր էր նաեւ Մէնէստրատի շինած Եկատի արձանըն . սահակներն կ'ըսէին թէ վտանգաւոր էր անոր երեսը նայիլ , վասն զի նորա մարմարեայ աչերն փայլակներ կարծրէին . կար նաեւ Ապոլոնի արձան մը , զոր Անտոնիոս յափշտակեց և Օգոստոս վերջէն ետ տուաւ . կային նաեւ շատ մը Ամաղոնաց արձաններ , զորս քանդակած էին Պոլիկղէտ , Փիդիսոս և Կրէսիլոս :

Ամենազնիւ մարմարէ սիւներ կային . նոցա մի քանին , զորս Յուստինիանոս յափշտակեց , այսօր Այա Սօֆիայի մզկիթն կը գանուին :

Արշափ անդրիագործք , նոյնքան և նը-

կարիչք մասնակցած էին Եփեսոսի տաճարին շքեղութեանն :

Ապալէլ ներկայացուցած էր անդ զԱղեքսանդր մեծ , շանթ ի ձեռին , նման Արամազդայ , զոր առասպելն նորա հայրը կ'ենթադրէր : Այս նկարին համար վըճարուած էր 20 տաղանդ ոսկւոյ , շուրջ մէկ միլիոն Փռանք : Այսօր ո՞ր նկար կըրնայ ասանկ զին մ'ուեննալ :

Տիանայի տաճարն նշանաւոր էր սրբան իւր ճոխութեամբն , այնքան և սրբութեամբն . ուխտաւորաց թիւն անհուն էր , նոյն իսկ հեթանոսութեան վերջին տարիներն : Արամազդ կը դանգափ այս բանէն՝ Ղուկիանոսի մէկ խօսակցութեանը մէջ .

« Եղաւ ժամանակ մը , յորում ես մարգարէ , բժիշկ , վերջապէս ամեն բան էի իրենց համար :

« Ամէն տեղ Արաւազդ կը տեսնուէր :

« Այն ատեն Գոտոն ու Պիսոս նշանաւոր էին . զոհերու ծուխն աչքերս կը մթընցընէր : Բայց յորմէ հետէ Ապոլոն մարգարէութեանց գործարան մը բացաւ Դեղփիսի մէջ , յորմէ հետէ Եսկիւլայ Պէրգամայի մէջ բժշկութեան սկսեց , Թըրակեայ Բինդիտէսն կանգնեց , Եգիպտոս Անուբիդէսն մը և Եփեսոս Արտեմիսէսն մը (Արտեմիս Տիանայի անուանց մին է .) ամէն մարդ այս նոր աստուածոց կը դիմէ , իսկ հազիւ հինգ տարին անգամ մը կը հաճին տօնել զիս յՈղիմպոս . իմ խորաններս Պղատոնի օրէնքներուն ու Կըրիսիպոսի հաւաքաբանութեանց նման ցուրտ են այսօր : »


Դիւրին է երեւակայել թէ քրիստոնէութեան առաջին առաքեալք ինչ ընդունելութիւն գտան Եփեսոսի մէջ , որ լի էր Տիանայի պաշտամամբն , և որ ճոխաբար կ'ապրէր իւր տաճարին և ուխտաւորաց հասոյթովն : Բայց վերջապէս քը-

րիստոնէութիւնն յաղթեց, Եփեսոս եւ պիսկոսոս մ'ունեցաւ և փաքը Ասիոյ նը- շանաւոր եկեղեցեաց մին եղաւ :

Վերջին տարիներս Եփեսոսի մէջ խու- զարկու թիւններ եղան : Նոցա գլուխն է ճարտարապետ մը , Պ. Վուտ : Սա տա- ճարին տեղը բնտուեց , և կ'երեւայ որ յաջողեցաւ գտնելու : Գտաւ նաև զանա- զան բեկորներ , որք , ըստ ամենայն հա- ւանականութեան , աներևութեացեալ տաճարին կը սլատկանին . այս հատակու- տորներուն մէջ կան յոնիական սիւնի մը ճոխ , գեղեցիկ և ահագին գլուխն , որ ունի 2 մետր 80 հարիւրորդամետր եր- կայնութիւն , բնական մեծութեամբ մար- դոց քանդակներով զարդարուն սիւնի մը ստորին մասը , լոր կ'երևի թէ Պիլիսոսի յիշած քանդակեալ սիւներէն մին է :

Խօսեցանք անցելոյն վրայ . ի՞նչ ըսենք ներկային համար :

Սյասուլուքի ապառաժուտ բլուրնե- րուն վրայ ելնենք : Մեր տակն , խոնաւ հողի մը վրայ , քառակուսի տեղ մը կայ . հոն քանի մը քարեր կան ցիր ու ցան , որոց վրայ գորտերն կը ցատկուտեն : Գեղ- նորակ ջուր մը տարածուած է չորս դին . երբ գիշերը մօտենայ , կինձերն կուգան հոն ապաստանելու : Սյս ժանտահոտ ճա- հիճն Տիանայի տաճարն է :



Ազնիւ Արայ

Ա՛հ զանգակն , Շիւլէռի զանգակն , ո՛վ չէ կարդացած Գերմանացի անմահ բա- նաստեղծին այդ գրական գեղեցիկ հատ- ուածն : Շիւլէռ մուսայից յատուկ լեզուաւ մը յաջողած է զանգակին քիմիական բա- ղադրութեան հետ վերլուծել նաեւ մարդ- կային զգացումներն : Երբ կը կարդամ

այդ շնաշխարհիկ ըբրթուածն , կը յուզ- ուիմ , բարեկամ , և աչերս արտասուօք կը լեցուին : Զանգակն , այդ անագապը- ղընձեայ գործին , որքան յիշատակներ կը զարթուցանէ յիս : Նորա մէն մի հնչու- մըն , մէն մի թրթուումն , տխուր կամ հեշտագին տպաւորութիւն մը կը թողու մարդոց վրայ : Մեր ամէն քայլերուն կ'ըն- կերանայ նա , օրորանէն մինչ ցդերեզ- ման : Երկնից և երկրի մէջտեղ կանգնեալ յիշատակարան մ'է կարծես : Զմեզ յաղթու կը կոչէ աւաւօտեան , տուընչեան և ե- բեկոյեան քաղցրահնչիւն շեշտերովն : Մասնակից կը լինի մեր սրբանուէր արժ- թից և դառնակիցից վշտաց : Նա՛ կ'ըն- կերանայ մեր սիրելեաց դագաղին և պի- տի հնչէ դեռ մեր ամենուն համար երբ մահուան մանգաղը գայ հնձել զմեզ :

Զանգակ , երկիցս հնչեցիր և խլեցիր աչերէս զ'արտասուս երբ դեռ մանուկ էի : Հնչեցիր մելամաղձիկ երբ կը բաժ- նուէի առաքինի մօրմէ մը . հնչեցիր տըխ- րագին երբ կը բաժնուէի որդեսէր հօրմէ մը : Սիրոյ , գթութեան , առաքինութեան անուպառ գանձեր որոցմէ զուրկ մնացած եմ այժմ : Արդարեւ տխուր բաժանում . . . անդարմանելի վիշտ . . . Եւ այն օրուընէն հետէ զանգակը կը հնչէ դեռ և ամէն անգամ որ կը լսեմ նորա մելամաղձիկ ձայնը , կը յիշեմ դժբաղտ մը որ կ'ար- տասուէ իւր կորուստին վրայ :

Բարեկամ , հեռացայ նիւթէս . . . միտքս մոլորեցաւ տխուր գաղափարաց մէջ : Թո- ղունք անցեալն , ներկայով դբաղինք ա- ռանց դիտնալու թէ՛ ինչ պիտի լինի ա- պագայն : Զանգակ ըսի , միտքս ինկան Փարիզու օբերային երաժշտական զան- գակներն : Հոն փոխանակ արտասուելոյ կ'երգեն , տես թէ՛ ինչպէս : Կիլեօսի թե- լի , Սիտի և Հիւկնօնեքոն ներկայացմանց միջոցին , երաժշտաց ակուսրին մէջ կ'ե-


րեւելին նաեւ երկու հսկայ զանգակներն , 100 քիլոկրամ ծանրութեամբ որք արոյրէ նուրբ թերթով ծածկուած էին : Մուրճն այդ կահուղ մետաղին վրայ ծովու ալեաց նման ելեւէջներ գոյացուցած էր որոց թիւն , ձեւը և դիրքը կը զանազանէին ձայնին դրոշմը , բարձրութիւնն և սաստկութիւնը : Այն երեկոյին յորում զանգակներն եւս պիտի մասնակցէին փողերու , ջութակաց և թմբուկի ձայնին , խուռն , բազմութիւն մը դիմած էր Փարիզու օրերան երաժշտական զանգակաց հնարիչը զՊարոն Սաքս ծափահարելու համար : Յառաջդիմութեան դարուն մէջ կ'ապրինք : Քատերաց տնօրէնք իսկ կը ջանան հրաշքներ գործել տեսարանին շքեղութիւնը աւելցնելու համար : Երաժշտութեան վրայ կը խօսինք . պէտք չէ մոռնալ երկու նոր գործիներ որոց շնորհիւ պիտի կարենանք այսուհետեւ նշանաւոր երգիչներու նուագներն լսել , յետ նոցա մահուան : Երաժշտութիւն , աստուածային արուեստ , դժուար յուզեց մեր սրտերն , դու կ'ողբերես ի մեզ գեղեցկին զգացումն , դժուար կ'ընտելանք թուիչներով կը տանիս զմեզ երեւակայական եզրի մը մէջ , առաւել անմահական քան զմեր բնակավայրն : Այսուհետեւ հանդարտ պիտի մեռնիք , ո՛ր երգիչներ , Ձեր մահուանէն վերջ , նուագագիրն մարդկութեան պիտի կարենայ լսելի ընել Ձեր հեշտալուր շեշտերն , այսինքն ձայնագրին նման նշանակեալ թղթոյ երկայն ժապաւէն մը գլանի մը ներքեւէն դուրս ելնելով՝ պիտի երգէ այնպէս , իբր թէ՛ երգողը դուք եղած լինէք :

Ասոնք են ահա՛ շարժուս կարեւորագոյն լուրերը զորս կը փութամ հաղորդել քեզ : Ներողամտ լեր , աչերէզ արտասուք խլեցի և ծիծաղդ միանգամայն շարժեցի : Ձե՛ս յիշեր խնդացողը եւ լա-

ցողը տիտղոսով գիրք մը : Կարդա՛ և իրաւունք պիտի տաս ինձ :

Քոյդ
ՎԱՀԵ

Օրբագիրդ



ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ - ՏԵԱՐՊԵՔԻՐ

(Շարունակութիւն եւ վերջ)

Քաղաքին ընակչաց տնական կեանքի երեւոյթը պարկեշտ է : Թրքուհիք փողոց ելած առեւտրին սեւ կերպասէ սաւան՝ իսկ Հայք սպիտակ կը հագնին . մեծ պատիւ է կանանց դեղին ճիզմէն : Էսանայք ճակատներէն , երեսներէն , պարանոցէն և լանջքէն ի վար ոսկի , արծաթ և մարգարտեայ զարդեր ունին առհասարակ : Գագաթանց վրայ կօտիկ և վրան լաչակ կամ եազմա , ականջներնուն վրայ մահէկի ձեւով բան մը ունին՝ որ կը հասնի մինչեւ երեսնուն կէսը , զինդը՝ ոչ միայն կանանց՝ այլ և արանց ալ վրան կը տեսնուի :

Արք սովորաբար կը հագնին զսուսն , էնթարի տեղական և մանրասոյէ : Մաղկեալ է արուեստ Մանրասոյի , կէզիի , սաւանի և այլ տեսակ կերպասեղինաց : Իբրեւ արուեստաւոր՝ ճարտար են . իբրեւ վաստակաւոր՝ ամեն գործի հետամուտ են :

Բոլոր Քրիստոնեայք՝ պապականք , բողոքականք , Հայ Հոռոմք , ասորիք եւլն՝ հայերէն կը խօսին , և զիրենք Հայ կ'անուանեն . եթէ հարկ լինի ցեղի մը կամ ազգի մը վրայ խօսիլ , կ'ըսեն Ասորի Հայ , Քիլտանի Հայ , Էրմանի Հայ , եւլն .

Տիգրանակերտի ձմեռը խիստ կծու ցուրտ կ'ընէ , թէպէտ շատ ձիւն չը տեղար . իսկ ամառն չափազանց տաք է : Ամառը ամբողջովին տանիքները կը ննջեն փայտաչէն բարձր մահճակալներու վրայ ,

ուր իբր թէ ազատ պիտի մնային տեղա-
կան կարիճի խայթելէն , որ ամեն տու-
ներու մէջ զրեթէ անխտիր կը գտնուին ,
սեւ , թանձր և կլոր են , զգուելի և սոս-
կալի : Չարագրապ կը կոչեն . թունաւոր
և դժնդակ է իւր խայթուածք . սարսա-

այն պալարը , զոր Տիարպէքիւր եարասը
կը կոչեն , և զոր կը հանեն անխտիր թէ
ընակիչք և թէ օտարականք՝ արու և էգ :
Ոտից , ձեռաց , երեսի վրայ կեղնէ , ո-
մանց ալ քթին , ճակատին և աչքին կը
պատահի , տարեկան եւս կը կոչեն , զի



փելի կը ճչացնէ խայթուած անձը . ան-
փիջապէս կը հասկնան թէ կարիճ խայթե-
ր է , կը վազեն օգնութեան , պատրաստ
դեղ ունին , որ կեօզ քաղի է , որով կը
խարեն խայթածն ու չըջապատն , որ նոյն-
քան կը կսկծցնէ մարմինը : Բացօդեայ
պառկելէն՝ շատերն տենդաւար են : Ա-
մենամեծ փորձութիւն է այս քաղաքին

տարիի մը չափ կը տեսէ , ապա կ'անհե-
տանայ :

Կարիճէն և այս պալարէն զատ , օձեր
և այլ մնասիչ սողուններ եւս կը գտնը-
ուին . սովորութիւն մը ունին , որ ման-
կանց ոտներ ու պճեղները փոքրիկ զան-
գակաց շարք մը կը կապեն , ոմանք նաեւ
բազրուկներն ալ , որպէս զի զանգակաց

ձայնէն փախչին և չը հպին մանկանց խայ-
թիչները : բայց այս բանը միանգամայն
եղած է մանկանց սիրելի հաճոյք մը և
գարգ , շատերը արծաթէ կը շինեն :

Յիշելու արժանի շատ բան կայ թէեւ ,
բայց մեք չերկարելու համար , մի քանի-
ներ աստ յիշատակելով կը վերջացնենք :

Վհուկներու , աստղագուշակներու և
կերպ կերպ հմայութիւն ընողներու բազ-
մութեամբ լի է այս քաղաքն և իւր գա-
ւառները , դաս դաս կանայք մեծաւ մա-
սամբ և արք , ունին նկարներ (հաճիներ)
իրենց ճակատուց , երեսաց , ձեռաց ,
բազկաց վերայ . անոնց տեսակները և
զայնս ունեցողները կը գրաւեն դիտողի
մը ուշքը : Սոյն նկարներու մի քանին
կ'ընդօրինակեմք , Արժ. Գ. Վարդապետ
Սրուանձտեանցի Թօրոս աղբար ընտիր
մատենանէն , ինչպէս որ քաղած եմք սոյն
տեղեկութիւններն եւս :

Մարմնոց վրայի այս նկարը , որ սովո-
րաբար ասեղով կը ծակեն ու կապոյտ մե-
լանի գոյն մը կ'առնու , ինչպէս մեր մըղ-
տեսիներու ձեռաց և բազկաց վրայ ե-
ղածները :

Պտղաբեր է Տիգրանակերտ , և գրեթէ
պտղոց ամէն տեսակն կը գտնուի , մանա-
ւանդ ձմերուկն ու սեխը , թէ համով և
թէ մեծութեամբ և ոչ մէկ տեղ կը գրտ-
նուի : Տիգրիս գետ առատ ձուկ կ'ընծա-
յէ , միսն ու կարագը ընտիր ու աժան :
Սպառելի և վաճառելի նիւթերն են ցո-
րեն , գարի , շերամի հունտ , ափիոն ,
չուշմայ , բրինձ , կորեկ եւլին . եւլին նաև
թիֆթիկ , սեկ , չրանուած կաշի և խա-
չանց րուրդ , կարպետ և այլ փոռոցներ ,
հագուստի և զարդուց արարողներ՝ որք
իրենց մէջ կը գործուին :

Դրսէն կը ներմուծէ տարին իբր 80 հա-
զար ոսկւոյ՝ ներկեալ մանած և մայիֆա-
թորայ , և իբր 20 հազար լիրայի զա-

նաղանք , այսինքն լեղակ , գըրմըզ , սուրճ
և շաքար , կաշի , գամ , ապակի , երկաթ ,
անագ քարիւղ եւլին :

Ասոնցմէ զատ Պարսկաստանէն , բաղ-
դատէն և Հալէպէն և հիւսիսային կող-
մերէն տեղական ապրանքներ իբր 25 հա-
զար լիրայի :

Հայք երկու Եկեղեցի ունին , 1. Ս. Կի-
րակոս 2. Ս. Սարգիս , այս վերջնոյն տա-
ճարն զեղեցկաչէն է : Սոյն երկու Եկե-
ղեցիք ունին բազմաթիւ և ծանրագին
զարդեր և շատ մասուկք :

Սոյն երկու եկեղեցեաց քով կան մէկ
մէկ դպրոց , որ անինամ թողուած են :
Նոյնպէս կան 3 դպրոց եւս , ուր կը յա-
ճախեն 400 մանչ և 80 աղջիկ :

Քաղաքին շուրջն գտնուած Հայաբնակ
գիւղորայք խառն ազգութեամբ 23 գիւ-
ղեր կան , որոց մէջ կը գտնուին 312 տուն
Հայք : Իսկ Տիգրանակերտի կուսակալու-
թեան ներքեւ կը գտնուին մի քանի ըն-
դարձակ գաւառակներ , ուր կը նստին
Միւտիր և Քայմաքամ :

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Պ Ի Տ Ո Յ Ք

Դ Ա Ս Ի Դ

Երէ . — Ձկեղէն . — Ընդճանուր գիտելիք

(Շարունակուոր տես տեսոր 12)

Երէ . — Այս անուամբ կ'կոչուին այն
կենդանիներն , մեծ ու պզտիկ , չորբո-
տանի և հաւ , որ կ'ընակին լեռներն ,
անտառներն , դաշտերն ու ճախնուտ վայ-
րեր , և որոց դէմ մարդս անդուլ պատե-

րազմ կ'մղէ : Հրազէններ , ցանցեր , շուներ և ուրիշ միջոցներ կ'գործածէ այս կենդանիները սպանելու կամ բռնելու համար :

Որտի կենդանիներու կարգէն են , այծեամը , քարայծը , եղջերուն , կինճը , ճագարը , լորը , կաքաւը , կտցարը , դախտապանը :

Վայրի կենդանիներու միւր կ'խորվեն , բայց եփելէն առաջ՝ պէտք է կարմիր գինիի կամ քացախի մէջ պատրաստել պղզպեղի , մեխակի , սոխի և դափնիի տերեւի միջոցաւ համեմել . այս գործողութիւնը կ'ըսուի հանդերձել :

Չկեղեմ . — Իրրեւ սնունդ՝ ձուկը շատ կ'նմանի մսին : Հասաստուն մասերն են , բնաթեւ ու ճարպ . միայն աւելի ջուր կ'գտնուի նոյնաչափ ձկան քան մսի մէջ , հետեւապէս նուազ սննդարար է :

Ամեն ձուկ այն սննդատու ոյժը չունի , որ ըստ տեսակի՝ կ'տարբերի . այս տարբերութեան պատճառն է ձկան ուտելի և անուտելի մասերուն համեմատութիւնն պարունակած ջրին քանակը : Ինչպէս՝ տափածուկն աւելի ջրոտ է քան լեզուածուկը . բայց այս ալ աւելի շատ մսան ունի : Կան նաեւ ձկուներ որ շատ իւղոտ են : Այս կարգին կ'վերաբերին տառեխը , օձածուկը , հրձուկը : Կարելի է աղել և պահել այդ ձկուները : Իսկ նուազագոյն իւղ պարունակող ձկներն են պափածուկը , ձողածուկը , լեզուածուկը , որոց միւր կարծր ու դժուարամարս կ'լինին երբոր աղուին :

Չոր ձկան միւր հիւթեղ է . այս մասին ամենէ հասարակ ձկուներ կ'հաւատարին ամենէ ընտիր և սուղ ձկանց : Այսպէս չորցած տափածկան 100 ին 97ը բնաթեւ է և Յը ճարպ , մինչդեռ ձողածուկն ու տառեխը կ'տան զատ զատ 92 մաս բնաթեւ և 8 մաս ճարպ : Լոստին (soumon)

միայն 78 մաս բնաթեւ կտայ , իսկ մնացած մասը ճարպ է . իսկ օձածուկն միայն 44 բնաթեւ ունի և Յ8 մաս ճարպ , թէև յարգի են իրրեւ համեղ ձկուներ :

Ուստի աղքատիկ մարդիկ մեծ կորուստ մը չեն ըներ հարուստին կերած ձուկը չուտելով , քանի որ անչափ և աժան համարուած ձկուներ ստէպ կ'հայթայթեն աւելի կարեւոր սնունդ քան սուղ ձկուներ : Եթէ լոսոյին տառեխին չափ աժան լինէր , դարձեալ շահաւոր սիրտի եղէր տառեխ գնողը , քանի որ մէկ լիտրէ լոստին այնքան սնունդ չպարունակէր որքան միւսն , թէեւ գինն համեմատաբար շատ բարձր է :

Լիտրէ մը թարմ տառեխի մէջ 840 գարեհատ ամխածին կայ և 128 բորակածին , մինչդեռ չորցածին մէջ համեմատութիւնն է 1435 առ առ 127 :

ԸՆԴՀ. ԳԻՏԵԼԻՔ . — Ինչպէս որ կան երկու դաս միսեր , Ա. Կրօր (եզան , ոչխարի , այծեմի , և այլն) միսեր , և Բ. ոպերալ (խոզի , գառնի , հաւու) միսեր , նոյնպէս կան տաք ու պղ արեւն ունեցող կենդանիներ : Առաջնայն կարգէն են՝ կաթնարեւներն ու հաւերը . երկրորդին կարգէն են՝ սողունները , ձկներն , ոտաբները , խնչայլներն , խեցգետիններն , և այլն : Տաքարեւն կենդանեաց միսն աւելի սննդարար են , աւելի ջերմութիւն և ոյժ կ'ազդեն , ծանր կ'մարսուին և աւելի շատ կ'մնան ստամոքսի մէջ . վստ զի որքան սննդարար , նոյնքան դժուարամարս կ'լինի կենդանիի մը միւր :

Տարւոք կենդանիներու միսն աւելի սովուն և սննդատու է : Արուներուն միսն աւելի սննդարար է ընդհանրապէս քան թէ էգերունը : Ըստ կիրառութեան և տեսակի կենդանիներու միսն թէ համեղութեան և թէ գոյնին կողմէ կ'զանազանի : Գառն ու անպիտան խոտեր և ընդերէն ուտող կենդանիներու միսին համն դառն և անշահ կ'լինի , մինչև իսկ կ'հոտի : Ճագարին միւր սև է , շատ սննդարար , այլ դժուարամարս . նոյնպէս են և վայրի բաղինն և երէինն : Համառօտ՝ երէն աւելի ուտելի է ձմեռն , վստն զի աւելի ջերմութիւն կ'արտազրեն , մինչդեռ ըսպիտակ միսերն , այս է հաւու , նապաստակի ,

հորթի և մինչև իսկ աղաւնիի , աւելի շուտ կը մարսուին և դրդուիչ չեն : Իսկ խոզի միսն աւելի ջերուցիչ է և դժուարամարս քան կովինը : Գիւղը կամ բայ օդին ընակող մարդիկ աւելի շուտ կը մարսեն այս տեսակ միսեր քան թէ քաղքի բընիկներ և նստուկ կեանք վարողներ :

Կենդանիներու միսերը կ'զանազանին նաև իրենց տարբեր գործարանաց համեմատ : Ամեն մասերը հաւասարապէս համեղ և սննդարար չեն : Որթու ուղեղը , լեարդն , երիկամունքն , արիւնը նուազ սննդարար են և ջերմատու , քան վտիտ միսը : Ատնք պէտք է դասել սպիտակ միսերու կարգը :

Ամեն դժուարամարս մասն է ճարպն որ աւելի տաքութիւն կ'ույր մարսողութեան ժամանակ քան կենդանիին բոլոր միւս մասերը : Այս է պատճառն որ Սառուցեալ դօուոյն բնիկներուն ուտեստի էական տարրն է ճարպը :

Հում միսն աւելի արագ կ'մարսուի քան թէ եփածը : Բայց անախորժ է ճաշակի և սննդամայն ոչ բոլորովին անփաստ : Ստեպ որդեր կ'գոյանան հում միս ուտելով և մարդուս կենդանային հիւանդութիւններ կ'հասնին : Կասկարայի վրայ եփած կամ խորված միսն աւելի դրդուիչ է քան խաշածը ջրին մէջ : Վասն զի եռուն ջուրն մին համն ու հոտը կ'առնէ և իր սննդատու տարրներուն մի մասը կ'լուծէ :

Պաղարիւն կենդանիներու միսը չէ սյնքան ջերմատու և սննդարար : Բայց տաքարիւն կենդանիներու միսն աւելի շուտ կ'մարսուի : Սակայն կան կարգ մը պաղարիւն կենդանիներ , որ դժուարաւ կ'մարսուին , վասն զի ունին տեսակ մ'իւր կամ ճարպ , ինչպէս արդէն ակնարկեցինք օձաձուկն , թառափն և մինչև իսկ լոսդին , ո՛ր կ'պարունակեն ճարպային տարր , որով թէև դժուարամարս , սննդարար են :

(Շարունակելիս)

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ



Մ Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ի Ն
ԵՐԵՒԵԼԻ ԱՐԱՆՑ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՆՅԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ազգային վարժարանաց մէջ իբր մրցանակ տրուելու համար մասնաւորապէս հրատարակուած է սոյն գեղեցիկ գրքոյկը որ հաւաքածոյ մ'է կարգ մը մեծ մարդոց մանկութեան և նշանաւոր մանկանց պատմութեան , 200 էջերով , ընտիր թղթի վրայ , մաքուր տպագրութեամբ և 25 մեծ պատկերներով զարդարեալ :

Գինն է 7 զուրուշ .

Կեդրոնատեղին է , Զարդարեան գրատուն , Սուլթան համամ , թիւ 14

ՏԱՐԵՐԲ ԿԱՆՐԱՅԱՅՈՒՈՑ

Յ Օ Ր Ի Ն Ե Ա Ց

Հ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ազգային վարժարանաց մէջ համաւեալ ուսուցիչ չափական գիտութեանց Հ. Պէրպէրեան էֆէնտի յօրինած սոյն դասագիրքն կարի յարմար մեր վարժարանաց մէջ հանրահաշուոյ ուսուցման , կը սարունակէ ամեն ինչ որ կարելոր է յիշեալ ուսման , յստակ բացատրութեամբք եւ ամեն կանոններու վրայ 600 ի չափ խընդիրներով ճոխ : Կը ծախուի Զարդարեան գրատուն . գինն է 10 զրշ .

Պոլիս Սուլթան համամ թիւ 14

ԸՆԹԵՐՅԱՐԱՆ
ՀԱՅԵՐԻՆ ԵՒ ԱՆԳՂԻԵՐԻՆ

ԵՐՋԱՆ Բ.

Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Ց

Ս. Մ. ՊԱՍՏԱՊԵԱՆ

Կեդրոնատեղին է Վ. Հիսարլեան գրատունը , Ուզուն-չարչի պաշը , թիւ 10

Գին 3 դահեկան

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ — ՆԵԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տպագր. ՆԵԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ — Պլիս , Էսքի Զապքիէ ճատտեպ , քիւ 63